

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Գրիգորյանը մասնակցել է Հայկ Ավագյանի ծննդյան 65 - ամյակին նվիրված մեծարման երեկոյին



Նոյեմբերի 14-ին Կապանի մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ Կապանի արվեստի քոլեջի վաստակաշատ ուսուցիչ, տաղանդավոր ֆլեյտահար Հայկ Ավագյանի ծննդյան 65 ամյակին նվիրված մեծարման երեկոն:

Անվանի ֆլեյտահարն, այսօր, որպես մենակատար հանդես է գալիս Բելգիայի Բերտեն, Լեֆդալ և Օտտենբուրգ քաղաքներում:

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Գրիգորյանը մասնակցել է միջոցառմանը և ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի անունից մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության, երաժշտական արվեստի ուսուցման գործում ունեցած ավանդի համար պարգևատրել շնորհակալագրով: